ԱԲԳԱՐ ԱՂԱՅԻ ՏՈՒՆԸ



Այդ տան գոյության մասին առաջին վկայությունը ես տեսա կարսեցի Արտաշես Ալեքսանդրյանի »Մղձավանջ« հուշերի գրքում: Այնտեղ զետեղված լուսանկարում հետևյալ մակագրությունը կա. »Կարսի Երկաթյա կամուրջը, (կենտրոնի երկարավուն շենքին անմիջապես հաջորդող շենքը (աջից) Աբգար-Աղայի (Զարենցի հոր) տունն է«:

Գյուտ արածի ոգևորությամբ ես այդ մասին պատմեցի Մարտին Թադևոսյանին: Նա իմ ոգևորության վրա ընկերաբար ու մտերիմ ժպտաց և առաջարկեց միանալ ուխտավորների՝ իր առաջնորդությամբ Կարս մեկնողների խմբին: Պարզվեց՝ Կարսում Եղիշե Զարենցի հայրական տունը գտնելու խնդիրը Մարտինի երկար տարիների փափագն է եղել, և նա համառորեն, անհոգնել ու անվհատ շարունակել է որոնումները, փաստեր հավաքել, մի շարք անգամներ գնացել Կարս:

Մարտինը Կարսում շատ ծանոթներ ունի: Նրանցից մեկը Ալիջանն է, ով ղեկավարում է Կարսի հեռուստաընկերությունը: Ալիջանի ավագ եղբայրը Կարսի քաղաքապետն է:

Ահա այս երկու անձնավորությունները՝ Նաիֆ և Ալիջան եղբայրները, շատ օգնեցին Մարտինին՝ գտնելու Զարենցի հայրական տան ճիշտ հասցեն: Քաղաքապետը հանձնարարական էր տվել արխիվային նյութերը հանել, Ալիջանը՝ իր ղեկավարած հեռուստաընկերության թղթակիցների միջոցով, Աբգար աղայի տան խնդրով, հնաբնակ կարսեցիների շրջանում հարցազրույցներ անցկացրել:

ՉԱՐԵՆՑԻ ՈՏՆԱՀԵՏՔԵՐԻ ՓՆՏՐՏՈՒՔԸ

«Վաղու՜ց, վաղու՜ց մտորում է իմ մեջ
մի անհուն ցանկություն: Վաղուց ելք է փնտրում կուտակված մի կարոտ»:
Ե. ՉԱՐԵՆՑ

Ուխտավորների առաջին այցելությունը Կարս, այսպես ասած, ճանաչողական էր: Ճանաչողական ոչ Մարտինի համար, այլ՝ ուխտավորների: Ճանապարհորդությունը նվիրված էր Եղիշե Չարենցի ծննդյան օրվան: Մինչ այդ, այժմ արդեն Ազգային ժողովի փոխխոսնակի իրավախորհրդատու Մարտին Թադևոսյանը, մի քանի անգամ եղել էր Կարսում՝ արդեն զուտ Չարենցի հայրական տան հասցեն ճշտելու համար: Իր սովորությունն է՝ ճշգրիտ, հազար անգամ ստուգված ու անխոցելի փաստերի առկայության պայմաններում միայն եզրակացության հանգել: Եվ երբ համոզվեց, որ Կարսի Էրզրումի փողոցի թիվ 100 հասցեում է խնդրո առարկա տունը, սկսեց պատրաստվել հերթական այցին՝ այս անգամ ուխտավորներ առաջնորդելով Կարս՝ պոետի ծննդյան 108-ամյա հոբելյանը նշելու նրա հայրական տանը:

Խենթի՞ ծրագիր էր, »հին ու աստղային երազների ճանապարհը« բռնած խելագարի՞ քայլ, որ Չարենցի ոտնահետքերը գտնելու հույսով՝ մամուռներում կորած արահետն է փորձում վերաբացել:

Այդպես, Երևանում, հուշաքարի մոտ, Կարսի իր տունը գնալու »իրավունքն ուզեցինք« Չարենցից:

Թե այստեղից ձեռքերս մեկնենք՝ Կարսն է: Բայց մենք՝ այդ երկրի հետ սահմանադուռ չունեցողներս, 500 կիլոմետրանոց պտույտը պիտի աներինք, որ հասնեինք Կարս և Չարենցի »մնաս բարով«-ը սոսկ ցտեսություն համարելով՝ շվար կանգնեինք »գետի ափին անտաշ քարով շինված« նրա մանկության տան դռանը:

Տունը այնքան էլ տուն չէր. երբեմնի երկհարկանի շենքի վերին հարկը քանդված էր, առաջին հարկ ասածն էլ խարխուլ պատերն էին՝ առանց ծածկի: Ներսը՝ բաց երկնքին ի տես, կեղտաջրով լցված: Մուտքի հնաբույր դուռը կար, որը պահպանելու որևէ բան չուներ:

Բայց սա Չարենցի՞ հայրական տունն էր, եթե անգամ որմից մի ծիվ միայն մնացած լիներ, էլի Չարենցի տունն էր:

Լիլիկը տարակուսեց, թե Երևանի Չարենցի անվան թանգարանի բակից բերած հողը որտե՞ղ շաղ տա՝ գուցե մուտքի դռան առա՞ջ, ուր արդեն խմբվել են ուխտավորները՝ տեղ բացելով հատկապես գեղանկարիչ Ստեփան Անդրանիկյանի համար, ով իր կերտած Չարենցի յուղաներկ դիմանկարը ձեռքին մոտենում էր, որ մի պահ կանգնի դռան մոտ և այդ ֆոնին լուսանկարվի:

Մենք շարժում էինք անցնող-դարձողի հետաքրքրությունից մեզ շրջապատողների զարմանքը. »Սրանք այդ ի՞նչ են փնտրում այս խարխուլ տան դռան, պատերի վրա ու այդ անխնամ բակում«: Նրանց ի պատասխան ուզում էինք բարձր, շատ բարձր ձայնել՝ »Ոտնահետքե՞ր ենք փնտրում, ոտնահետքե՞ր ու մատնահետքե՞ր…«:

Երեկոյան, արդեն հյուրանոցում, նկարը հանդիսավոր կախեցինք ռեստորանի սրահի պատից, »Չարենց-108« տորթն էլ նկարի տակ:

Պահն էր պատեհ, որ Երգահան Սասուն Պասկևիչյանը ձայներ Չարենցի տաղերով գրած իր երգերը, որին ուխտավորներս բոլոր ձայնակցեցինք, ու երեկոն լցվեց չարենցյան տաղերով, չարենցյան երգերով: Սասունը Չարենցի տուն գալու »մուտքի վիզան« էն գլխից ուներ. պոետի տաղերով գրված նրա մի շարք երգեր հայ երգիչներից մի քանիսի համերգային ծրագրերից անբաժան են: Սասունը դատարկ չէր եկել՝ նա բերել էր իր երգերի ձայնագրությունները, և ամբողջ ճանապարհին ու Կարսում անցկացրած օրերին մենք վայելում էինք Չարենցի տաղերի ունկնդրի ու նաև ձայնակցողի հաճելի բերկրանքը: Հպա՞րտ էր Սասունը, որ դրանց հեղինակն է, լա՞վ էր զգում, որ սիրված են իր երգերը: Թերևս: Բայց ավելի շուտ և ավելի շատ նա ուրախ էր, որ այս ճամփորդությունը նոր երգեր գրելու տրամադրություն ու ներշնչանք է բերում:

Չարենցի հայրական տան վիճակից եկող տրտմությունն աստիճանաբար անցնում էր, և մեր թախծոտ տրամադրությունն ուրախության երանգներ ստացավ՝ մեր հանպատրաստից երեկոն աշխույժ ու հետաքրքիր դարձնելով: Չարենցի տաղեր արտասանեցինք ու երգեցինք, երգեցինք ու արտասանեցինք՝ մի ողջ գիշեր »մեր պայծառացած խոհերով« արթուն մնալով… Չարենցի հետ: Որտեղից-որտեղ հիշեցինք Հովհաննես Շիրազի տողերը. »Շիրմե շիրիմ ես ձայն տալով, սուրբ հույսերով մեր թռռների՝ //Պիտի կյանքը թնդացնեմ Կարսի իմ հին փողոցներում«:

Միջավայրը չարենցոտված էր, և նահիրյան երկրի հնամենի այդ քաղաքը մեզ այլևս պատկերանում էր չարենցյան ժամանակների տեսքով, և տունն այդ, որ առայժմ խղճուկ ու հնաբույր է, այլևս շքեղ մի շինություն էր, իր կամարի վրա ունեցած ցուցանակով՝ »Չարենցի

անվան մշակույթի տուն«:

Չարենցը մեզ հետ էր, և կարծես թե այն նույն ժամանակներն էին, երբ, Ավետիք Իսահակյանի խոհերի հանգույն՝ ծառերն այստեղ հայերեն էին սոսափում, թռչունները հայերեն էին ծլվլում, առվակները հայերեն էին խոխոջում. ամեն քար ու իր, աստղ ու երկինք հայերեն էին, հայկական, հայաշունչ: Եվ մենք էլ »Երկիր Նաիրի«-ի նորօրյա կերպարներ էինք՝ մեծ պոետի հիշատակի խնկարկումին եկած ուխտավորի զգացական կեցվածքով ու խոնարհումով:

Գիշերն այդ լուսավոր էր, խորհրդավոր էր, թափանցիկ ու մաքուր էր:

Հաջորդ օրը, առավոտ ծեգը-ծեգին, կրկին գնացինք Չարենցի տուն: Ճանապարհին Առաքելոց եկեղեցին էր ու Վարդանի կամուրջը, վերը՝ »խիստ, խոժոռ, որպես արևելյան քարե մի բռնակալ«, բերդն էր: Հետո Ալեքսանդրովսկին, որ հիմա Էրզրումի փողոց է կոչվում, ու այդ փողոցի վրա անշուք այս ավեր տունը՝ Չարենցի՜ տունը: Իսկական ողբերգություն կլինի այդ տունը թողնել այդ վիճակում: Սա արդեն նշանակում էր, որ ուխտը շարունակություն ունի, որ այս ուխտավորությունը սոսկ այցելություն և խնկարկում չէ, որ մենք նաև մեծ առաքելության ենք կոչված: Այս մասին՝ շարունակության մեջ: Իսկ մինչ այդ՝ գյումրեցի տղաների մեղմ նվագակցության տակ խմբովին արտասանենք.

»...Գորշ, տաղտկալի ու խելագար երգ է կարծես
այս կյանքը մի.
Ինչ-որ մեկի սրտում բացված-վերք է կարծես
այս կյանքը մի.
Եվ ու՞մ համար-էլ ու՞մ համար
կարոտակեզ երգե հիմի
Սիրտս՝ լցված տարիների
սեղմ արճիճով ու կապարով:
...Ու էլ ամե՛ն մեղքի համար սիրտս հիմա ունի ներում.
Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ՝
ա՛չքս է հեռուն...«:

Շարունակելի